

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՄԻԳՐԱՑԻԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Առաքելյան Իռա

*Տնտեսագիտական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող*

Ժամանակակից համաշխարհայնացումը (գլոբալիզացիա) ձեռք է բերել նոր ձև, հատկապես՝ քաղաքական և տնտեսական հակամարտող համակարգի ապամոնտաժումից հետո, որը իսկապես մեր կյանքի բոլոր ոլորտներում սկիզբ դրեց ամենայն նորին:

Բռնապետական քաղաքական և տնտեսական համակարգերի վերացումը, հասարակության ժողովրդավարացումը և բացությունը, ներառյալ՝ տնտեսական ժողովրդավարությունը, հարաբերությունների մարդկայնացումը և մարդու իրավունքների առաջնությունը, համաշխարհայնացման փոխակերպումների նոր փուլի բաղկացուցիչ մասերն են:

Համաշխարհային փոխկապվածություն՝ այսպիսի վճռորոշ հասկացությամբ կարելի է բնորոշել ժամանակակից աշխարհակարգի էությունը:

«Մարդկությունը, եթե նա ցանկանում է կենդանի մնալ և զարգանալ, պետք է ընթանա դեպի ժողովրդավարական և արդար նոր աշխարհակարգի կառուցում, որի կենտրոնում պետք է լինի մարդը»¹:

Մույն հոդվածում քննարկվում է համաշխարհայնացման, իբրև ուրակապես նոր փոխակերպումների, ներկայիս հակասությունների և հիմնախնդիրների աղբյուրի ազդեցությունը ժամանակակից միգրացիայի զարգացման և նրա հետ կապված անվտանգության վրա, ընդ որում համաշխարհայնացումը վերլուծության է ենթարկվում՝ որպես քաղաքակրթության զարգացման ժամանակակից շրջանին ներկա գործընթաց:

¹ Глобальные трансформации и стратегии развития. Киев, 2000, с. 10.

Աշխարհը դանդաղ ներքաշվում է հաղորդակցության համաշխարհային համակարգի մեջ միասնական շուկաները, կապի համաշխարհային միջոցները, ԶԼՄ-ների համաշխարհային կապուղիները, համաշխարհային տուրիզմը, ուսուցման և գիտության համաշխարհային համակարգերը փոփոխում են մեր մոլորակը, մեր կյանքը: Այդ ամենը մի ժողովրդի մոտ առաջացնում են խանդավառություն, մյուսների մոտ՝ զգուշավորություն, երրորդների մոտ՝ դիմադրություն:

XXI դարում, երբ «տնտեսական գործընթացների համաշխարհայնացումը տարածվում է միջազգային առևտրի, կապիտալների և ներդրումների միջպետական շարժման, աշխատուժի և տարադրամի տեղաշարժման, տեղեկատվական հոսքերի ակտիվացման և բաշխման վրա»², համամոլորակային մասշտաբով ռեսուրսների սահմանափակության պայմաններում ողջ աշխարհը դառնում է զավթողագործության (էքսպանսիա) օբյեկտ:

Միևնույն ժամանակ, չնայած տնտեսական կյանքի միջազգայնացմանը, ժամանակակից աշխարհում տիրապետում է դաժան մրցակցությունը: Աշխարհաքաղաքականությունը համաշխարհային քաղաքականության մեջ ստեղծված իրավիճակը բնորոշում է հետևյալ կերպ. «Համաշխարհային քաղաքականության միակ և գլխավոր էությունը ռեսուրսների և նրանց նկատմամբ վերահսկողություն հաստատելու համար պայքարն է»³: Դա նշանակում է, որ «պետությունների քաղաքականությունը միշտ իրականացվում է նրանց սեփական, և երբեք՝ ուրիշների շահերից ելնելով»⁴:

Ժամանակակից աշխարհը ավելի բարդ է, ավելի խոցելի և նվազ կանխատեսելի, քան երեկվա աշխարհը: Ժամանակակից աշխարհում չկա ներդաշնակություն, կան բախումներ և լարվածություն:

Տնտեսության համաշխարհայնացումը, որը բնութագրվում է համաշխարհային շուկաների բացմամբ, մրցակցային պայքարի սրմամբ, տեխնոլոգիական և կառուցվածքային փոփոխություններով, ինչպես նաև՝ տեղեկատվական տեխնոլոգիաների հեղափոխությամբ, խորը ազդեցություն է գործում աշխատանքի աշխարհի վրա: Մակայն նրա հետևանքները հավասարաչափ չեն բաշխվում, և առավել զգալի դժվարություններից մեկն այն է, որ աշխատանքի աշխարհին միաժամանակ

² **Маринченко А.**, “Геополитика”. Учебное пособие / А.В.Маринченко. М.: Инфра-М, 2009. 429 с., с. 6.

³ **Стариков Н.**, “Геополитика: Как это делается” / Н.В. Стариков. СПб: Питер, 2014. 368 с. (Серия: “Бестселлеры Николая Старикова”), с. 5.

⁴ Там же, с. 7.

միանում և նրանից անջատվում են մարդիկ, տարածաշրջաններ և տնտեսության ճյուղեր⁵:

Համաշխարհային գործընթացը, բացելով վիթխարի նոր հնարավորություններ, այնուամենայնիվ, երկրներին թույլ չի տալիս հավասարապես օգտվել այդ հնարավորություններից: Տնտեսության համաշխարհայնացման գործընթացից աշխարհի ոչ բոլոր երկրներն ու տարածքներն են շահում: Իսկ տեխնոլոգիական հեղափոխությունը ոչ բոլոր երկրներում է տարածվել: Շատ երկրների տնտեսությունները առավել բարձր տեմպերով ընդգրկվել են համաշխարհային տնտեսության մեջ, մինչդեռ բազմաթիվ այլ երկրներ մնացել են այդ գործընթացի շրջանակներից դուրս, ինչը բերում է համաշխարհային անհավասարության աճին:⁶

Համաշխարհայնացման գործընթացի պարտադիր բաղադրիչը, նրա այնպիսի բաղադրիչների շարքում, ինչպիսիք են կապիտալը, ապրանքների, տեխնոլոգիաների, տեղեկատվության շարժը, բնակչության շարժն է: Բնակչության միգրացիան միշտ ուղեկցել է աշխարհում մեծ փոփոխություններին, ինչպիսիք են գաղութացումը, ինդուստրիալիզացիան, համաշխարհային պատերազմները կամ ճգնաժամերը:

Միգրացիայի ժամանակակից գործընթացների բնույթը որոշվում է արդիականացման և հետարդիականացման տրամաբանությամբ, որը բերում է աշխարհի մասերում ընթացող սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային գործընթացների փոխկապակցվածության ուժեղացմանը: Համաշխարհային ու սոցիալ-տնտեսական փոփոխությունների և միգրացիայի փոխհարաբերությունները չափազանց բարդ ու հսկասական են: Այս երկու գործընթացները ոչ միայն «փոխադարձ հրահրողական» են, այլև՝ «փոխադարձ խնդրահարույց»⁷:

Վերջին ժամանակաշրջանի միգրացիաները զգալի չափով հարկադրական են և պետությունների կողմից ամենսին չեն վերահսկվում, կամ թույլ են վերահսկվում: Բացի այդ, միգրացիայի հոսքերը՝ իրենց սոցիալական լցվածությամբ, միգրացիայի որոշիչ պատճառներով, ուղղվածությամբ, տարածգությամբ և ժամանակով, համասեռ չեն:

Համաշխարհայնացող աշխարհում միջազգային միգրացիան դարձել է աշխարհի զարգացման կարևոր գործոն, որն ապահովում է աշխատանքի միջազգային շուկայի ճկունությունը, առավել հետամնաց

⁵ «Ваш голос в сфере труда». Международная конференция труда, 88-я сессия, Женева, 2000.

⁶ Там же, с. 9.

⁷ «Население и глобализация». М., 2002, с. 288.

երկրներին արտադրության համաշխարհային մշակույթին հաղորդակից դարձնելը, արտադրության գործոնների՝ համաշխարհային առաջընթացի տեսանկյունից առավել ռացիոնալ վերաբաշխումը, մշակույթների փոխազդեցությունը և փոխադարձ հարստացումը: Միջազգային միգրացիայում արտացոլվում են բոլոր առավել սուր հիմնախնդիրները, որոնք ուղեկցում են համաշխարհայնացման ժամանակակից գործընթացներին: Այդ հիմնախնդիրներից են զարգացած և զարգացող երկրների տնտեսական և ժողովրդագրական ներուժի տարբերությունների խորացումը, ընդունող երկրների աշխատանքի ազգային շուկաներում մրցակցության աճը, աշխատանք տրամադրողների կողմից աշխատավոր միգրանտների շահագործման ուժգնացումը: Միգրացիայի ոլորտում համաշխարհայնացմանը բնորոշ հակասությունները դրսևավորվում են միգրացիան համաշխարհային կազմակերպված բիզնեսի վերածելու ձևով, որը ներառում է միգրացիոն ծառայությունների բոլոր տեսակները՝ սկսած աշխատատեղ փնտրելուց մինչև մարդկանց մաքսաենթությունն ու առևտուրը: Այսպիսով, միջազգային միգրացիան համաշխարհայնացման անքակտելի մասն է:

XX դարի երկրորդ կեսին տնտեսությունների միջազգայնացումը՝ մի կողմից, և երկրների անհամաչափ զարգացումը՝ մյուս կողմից, պատճառ դարձան այն բանի, որ աշխատանքային միգրացիան ձեռք բերեց սոցիալ-տնտեսական և քաղաքական աննախադեպ նշանակություն, որը վերածվեց իսկապես համաշխարհային երևույթի: Ինչպես նշում է արևմտյան ճանաչված հետազոտող Վ. Բեննինգը, այսօր միջազգային աշխատանքային միգրացիան դարձել է «համաշխարհային տնտեսության ինտենսիվ համաշխարհայնացման առավել էական կողմերից մեկը, որը նկատելիորեն ազդում է ավելի քան հարյուր երկրների տնտեսությունների և աշխատուժի վրա»⁸: Երկրների միջև տեղաշարժվում են ամենատարբեր մասնագիտությունների աշխատանքային ռեսուրսների նշանակալից քանակակազմեր՝ գիտնականներ, ստեղծագործական մտավորականության ներկայացուցիչներ և այլն: ՄԱԿ-ի գնահատականներով, 1990 թվականին կար 120-200 մլն օրինական աշխատանքային միգրանտ՝ 1965 թվականի 75 միլիոնի համեմատությամբ: Այսօր, միգրանտների աշխատանքային փոխանակման մեջ են ընդգրկված գործնականորեն բոլոր երկրները⁹: Վերջին տասնամյակներ-

⁸ Стоккер П., “Работа иностранцев: обзор международной рабочей силы”, М., 1996.

⁹ Labor migration (International migration policies. UN Dep. Of econ. And social affairs. Population division – NY, UN, 1998, pp. 87-172).

րում աշխատանքային միգրացիան հանգեցրել է հարաբերականորեն նոր տնտեսական երևույթի՝ ընդունող երկրներում աշխատանքի շուկայի սեզոնացմանը և աշխատատեսակների շերտավորմանը: Արդյունաբերական զարգացած երկրների աշխատանքային շուկաներում ազգային հատկանիշով աշխատավորների խտրականության պատճառով միգրանտները, առաջին հերթին, զբաղեցնում են ոչ հեղինակավոր աշխատատեղեր, որոնք բարձր որակավորում չեն պահանջում, այն էլ աշխատանքի ծանր պայմաններով և ցածր վարձատրությամբ: Աշխատանքի բաժանման այդպիսի վերարտադրությունը և խորացումը զարգացած ազգերի նոր մարտահրավերն է զարգացող երկրներին:

Աշխատանքային միգրացիայի ներսում նույնպես շերտավորում է առաջացել ըստ միգրանտների տիպի՝ բարձր որակավորում ունեցող մասնագետներ և գիտնականներ, զանգվածային մասնագիտություններ (ծառայությունների ոլորտի, շինարարության և այլն) աշխատակիցներ, միջազգային կազմակերպությունների և անդրազգային կորպորացիաների աշխատակիցներ, աշխատանքային միգրանտ կանայք և այլն:

Այս իրադրությունը, որը կապված է միգրացիայի աճի հետ, նոր համաշխարհայնացող հասարակությունում, գործնականորեն դառնում է ազգային պետության ավանդական պատկերացման նոր մարտահրավեր: Վերը նկարագրված գործընթացները դիվերսիֆիկացնում են սոցիալ-տնտեսական ինստիտուտները, լեզուն, մշակույթը, վարքագծի մոդելները, ինչպես՝ ընդունող, այնպես էլ՝ ելքի երկրներում: Այդ պատճառով արագանում է անդրազգային հանրությունների տարածումը, ինչը հաճախ համարվում է մարտահրավեր՝ ազգ ավանդական ըմբռնմանը:

Միգրացիան, ինչպես և ցանկացած սոցիալական երևույթ, ներգծվում է ոչ թե մեկ, այլ բազմաթիվ համատեքստերում: Վերլուծական որոշակի խնդիրներ լուծելու համար միգրացիան կարող է քննարկվել այդ համատեքստերից որևէ մեկում: Առավել պատշաճ ընտրությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ նա ապահովում է հետազոտական ուշադրության կենտրոնացումը այն համատեքստի վրա, որը տրվյալ ժամանակի և վայրի համար նշանակալից է:

Միգրացիան իրական կամ հնարավոր մարտահրավեր է անվտանգությանը: Գրեթե ցանկացած միգրացիոն տեղափոխություն մի տարածքից՝ մյուսը, բովանդակում է մարտահրավեր անվտանգությանը: Այն կարող է ստեղծել իրական կամ հնարավոր սպառնալիք գործնականորեն անվտանգության ցանկացած կողմին: Ճիշտ է, մարտա-

հրավերը համահավասար չէ սպառնալիքին, և ամեն մի միգրացիոն հոսք սպառնալիք չի ստեղծում, բայց ելման բևեռում ստեղծում է թուլացման կամ, նույնիսկ ձևավորված սոցիալական կապերի խզման իրավիճակ, թեկուզև նրանց անմիջական մասնակիցների թվի կրճատման հաշվին: Տեղի է ունենում ուղարկող հանրությունների և ընտանիքների քայքայում, մնացողների մի մասի վերածումը ռեևտայով ապրող ինչ-որ մարդկանց, որոնք ապրում են հիմնականում միգրանտների դրամական փոխանցումների հաշվին: Ընդհանուր առմամբ, հասարակությունը կարող է բախվել «ուղեղների» արտահոսքի, իր ժողովրդագրական, տարածքային և սոցիալ-մասնագիտական կառուցվածքների օջախային ձևախախտումների հիմնախնդիրների հետ: Անվտանգության այս սպառնալիքներին, որոնք առաջացել են միգրանտների մեկնման պատճառով, կարող են հավելվել նրանց վերադարձից ածանցված սպառնալիքները, օրինակ, օտար մշակույթի նմուշները կամ կացության երկրից/տարածքից փոխառնված սպառման նմուշները հարազատ միջավայր ներմուծելը:¹⁰

Անցումային դարաշրջանի անկայունությունը բարդեցնում է այնպիսի արմատական հարցի լուծումը, ինչպիսին միջազգային անվտանգության ամրապնդումն է: Պատմական ամեն մի դարաշրջան անվտանգության հղացքը (կոնցեպցիան) լցնում է նոր բովանդակությամբ: Ամեն տարին ճշգրտում է այն խնդիրները, որոնք ստիպված է լուծել այս կամ այն երկիրը զարգացող աշխարհում ինքնահաստատման ամենաարդյունավետ ուղիների փնտրտուքի ընթացքում: Միջազգային անվտանգության ժամանակակից աստիճանական զարգացման բնույթը երկբևեռայնությունից՝ բազմաբևեռության, պաշտպանական դաշինքներից՝ անվտանգության միջազգային համակարգերին, կոլեկտիվ անվտանգությունից՝ կորպորատիվ անվտանգության, պետական ինքնիշխանությունը և մարդու իրավունքները միմյանց հակադրելուց նրանց համաձայնացմանը անցնելն է:

Կայունությունը բոլոր կողմերից պահանջում է բարձր պատասխանատվություն և զգուշություն: Ամեն մի երկրի անվտանգությունը, բացի այն միջոցներից, որն այդ երկիրը ձեռնարկում է սեփական անվտանգությունն ապահովելու համար, կախված է նաև վտանգի զգացման աստիճանից, որը կարող է ծագել հնարավոր հակառակորդի մոտ՝ այդ նույն միջոցների կիրառման պատճառով:

¹⁰ См. **Старченко Г.**, “Трудовые миграции между Востоком и Западом: Вторая половина XX столетия”. М., 1997, сс. 125-130.

Ակնհայտ է, որ միջազգային անվտանգության նոր համակարգը պետք է կառուցվի նշված բարդ իրավիճակը հաշվի առնելով: Վերջին ժամանակների իրադարձությունները ցույց են տալիս ինքնիշխան պետության, իբրև միջազգային համագործակցության հիմնական սուբյեկտի կարևորությունը:

Անվտանգության նոր համակարգի որոնումները պետք է հիմնված լինեն, ամենից առաջ ընդհանուր արժեքների և ազգային շահերի ներդաշնակեցման մեթոդների վրա: Նոր աշխարհակարգի համընդգրկուն բնույթը պետք է արտացոլի խաղաղության երեք արմատական հիմքերը՝ անվտանգություն, սոցիալական և տնտեսական բարեկեցություն ու զարգացում, ժողովրդավարություն և մարդու իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանք:

Ինչպես նշել է Դանիայի վարչապետ Պաուլ Ռասմուսենը, «անցյալում պետության անվտանգությունն ավելի կարևոր էր, քան՝ մարդու անվտանգությունը: Պետք է խոստովանել, որ այսօր իրական անվտանգությունը հիմնվում է մարդու անվտանգության վրա... Բոլոր կառավարությունները պետք է վարեն այնպիսի քաղաքականություն, որը հարմարեցված է հարստության և եկամուտների լավագույն բաշխմանը... Աղքատ երկրների ազգային ջանքերը պետք է ուղղվեն՝ միջազգային համերաշխության ակցիաները դրան միացնելուն»¹¹:

XX դարում ազգային անվտանգության հասկացության աստիճանական զարգացումը կարելի է բնորոշել, որպես սոսկ պետության շահերը սպասարկելուց մինչև մարդու, հասարակության և պետության շահերը ներդաշնակորեն զուգակցելու ձգտում: XX դարի երկրորդ կեսին մեծացել է այն բանի գիտակցումը, որ գոյություն ունի մարդուն որոշակի իրավունքներով օժտելու «թույլատրելի» մակարդակ, որոնց նկատմամբ ոտնձգությունները դադարում են պետության ներքին գործը լինելուց և արդարացնում են արտաքին միջամտությունը՝ բխումը միջազգային լարվածության վերածելու սպառնալիքը նվազեցնելու նպատակով: Ինչ վերաբերում է միջազգային անվտանգության հիմնախնդիրների լուծման ընթացքում մարդու իրավունքների հարցը պետության ուշադրության կենտրոնում հայտնվելուն, ապա դա XX դարի վերջի երևույթ է: Սկսած ՄԱԿ-ի Կանոնադրությունից մինչև Հելսինկիում ընդունված ԵԱՀԿ եզրափակիչ ակտը ամրապնդվում է ընդհա-

¹¹ См. Зленко В., «Новые тенденции, проблемы и перспективы социального развития». // Глобальные трансформации и стратегии развития, НАН Украины. Институт мировой экономики и международных отношений. Киев, 2000, с. 303.

նուր անվտանգության և մարդու անհատական իրավունքների հղացքային միավորումը:

Հայաստանի ազգային անվտանգության ամրապնդման հիմնախնդիրը պետք է լուծվի կոնկրետ պատմական պայմաններում: Հայաստանում հուսալի ազգային անվտանգություն ստեղծելու հարցում վճռական նշանակություն ունի տնտեսական անկախությունը, որն անհնար է ձեռք բերել ազդարարման ակտով: Տնտեսական ներքին տկարությունը երկիրը դարձնում է խոցելի և արտաքին ճնշումների նկատմամբ՝ զգայուն, սահմանափակում է նրա հնարավորությունները միջազգային ասպարեզում: Հենց այդ պատճառով տնտեսական երեկոյթների ուսումնասիրությունը, տնտեսական խնդրակարգի վերլուծությունը, դրանց լուծման ուղիների ճիշտ ընտրությունը պետք է դառնան տնտեսական վերածննդին ուղղված ռազմավարական ծրագրերի ձևավորման և փուլային իրականացման անհրաժեշտ նախադրյալներ: Այսօրվա դրությամբ այդ համատեքստում առավել էական հիմնախնդիր է սոցիալ-տնտեսական անվտանգությունը, որը ներառում է բոլոր ենթաճյուղերը և նրա հետ կապված տնտեսական, սոցիալական, բարոյահոգեբանական և քաղաքական հետևանքները:

Հայաստանի պայմաններում չափազանց մեծ նշանակություն է ձեռք բերում բարոյահոգեբանական գործոնը, որը դեռևս շարունակում է մնալ բացասական մեծություն, երբ ուսումնասիրվում է մեր պետության ուժը: Այստեղ անկախ պետության գոյության երևույթի հետ մեկտեղ առկա է նաև «չարդարացված հույսերի» երևույթը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս հոդվածում քննարկվում է համաշխարհայնացման իբրև որակապես նոր փոխակերպումների, ներկայիս հակասությունների և հիմնախնդիրների աղբյուրի ազդեցությունը ժամանակակից միգրացիայի զարգացման և նրա հետ կապված անվտանգության վրա, ընդ որում համաշխարհայնացումը վերլուծության է ենթարկվում՝ որպես քաղաքակրթության զարգացման ժամանակակից շրջանին ներկա գործընթաց: Միջազգային միգրացիայում արտացոլվում են բոլոր առավել սուր հիմնախնդիրները, որոնք ուղեկցում են համաշխարհայնացման ժամանակակից գործընթացներին: Միգրացիան կարող է ստեղծել իրական կամ հնարավոր սպառնալիք՝ գործնականորեն անվտանգության ցանկացած կողմին: Նոր աշխարհակարգի համընդգրկուն բնույ-

թը պետք է արտացոլի խաղաղության երեք արմատական հիմքերը՝ անվտանգություն, սոցիալական և տնտեսական բարեկեցություն ու զարգացում, ժողովրդավարություն և մարդու իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանք:

Բանալի բառեր. փոխակերպում, համաշխարհայնացում, միգրացիա, անվտանգություն, ժողովրդավարություն:

МИГРАЦИЯ И БЕЗОПАСНОСТЬ В КОНТЕКСТЕ ГЛОБАЛИЗАЦИИ

Արաкеլյան Իրա

*Кандидат экономических наук,
старший научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА*

РЕЗЮМЕ

В данной статье рассматривается влияние глобализации как источника качественно новых трансформаций, новых проблем и противоречий современности на развитие современной миграции и ее влияния на безопасность, при этом глобализация анализируется как процесс, имманентный современному этапу развития цивилизации. В международной миграции отражаются все наиболее острые проблемы, сопровождающие современный процесс глобализации. Миграция может создавать реальные или потенциальные угрозы практически любому аспекту безопасности. Глобальная природа нового мирового порядка должна отражать три фундаментальные основы мира: безопасность; социальное и экономическое благополучие и развитие; демократию и уважение прав и свобод человека.

Ключевые слова: трансформация, глобализация, миграция, безопасность, демократизация.

MIGRATION AND SECURITY IN THE CONTEXT OF GLOBALIZATION

Arakelyan Ira

*Candidate of Economy Sciences,
Senior Researcher of the Institute of
Philosophy, Sociology and Law of NAS RA*

SUMMARY

This article considers the impact of globalization as a source of qualitatively new transformations, new problems, and contradictions of the present-day world on the development of modern migration, and its impact on security. Globalization is analyzed as a phenomenon integral to the current stage of civilization development.

International migration reflects all the most critical problems that accompany the current process of globalization. Migration poses real or potential risks to almost any aspect of security. The global nature of the new world order must reflect the three fundamentals of peace: security; social and economic well-being and development; democracy and respect for human rights and freedoms.

Keywords: transformation, globalization, migration, security, democratization.